

ԱՐԻԵՍՏՆԵՐԻ ՈԼԻՄՊԻԱՏԸ ՄՈՍԿԻԱՅՈՒՄ

Այս ամառ Մոսկւայի մէջ տեղի ունեցաւ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան մէջ ապրող ժողովուրդների թատրոնների եւ արւեստների առաջին Համամիութենական Ոլիմպիատը, որ տեւեց մի ամբողջ ամիս:

Այդ Ոլիմպիատը քաղաքական եւ կուլտուրական խոշոր նշանակութիւն ունէր: Նա պիտի ցոյց տար սովետական իշխանութեան վարած ուղիղ գիծը ազգային լնդրի լուծման գործում եւ միւս կողմից ցուցադրէր, թէ շնորհիւ այդ քաղաքականութեան՝ Միութեան մէջ մտնող ժողովուրդները ի՞նչպիսի գլխի նւաճումներ են ունեցել իրենց ազգային մշակոյթի բնագաւառում:

Մրցակցութեան համար հրաւիրւած էին 17 թատրոն 14 տարբեր լեզուներով, 10 կինօկազմակերպութիւն եւ 8 ազգային երգչա-նւագախումբ:

Ոլիմպիատը բացւեց Մոսկւայի Յեղափոխութեան թատրոնում մեծ հանդիսաւորութեամբ: Ներկայ էր մօտ 1000 հոգի, որոնք եկել էին մասնակցելու Ոլիմպիատին սովետական բազմաթիւ հանրապետութիւններից: Բացման ճառում, կազմակերպիչ կոմիտէի եւ Ռուսաստանի Արւեստների գլխաւոր կոմիտէի նախագահ Ֆելիքս Կօնը յայտարարեց, որ մենք այս Ոլիմպիատով ուզում ենք ցոյց տալ համայն աշխարհին, թէ եթէ ցարական Ռուսաստանում, ինչպէս եւ մինչեւ օրս կապիտալիստական այլ երկրներում, ազգային ինքնորոշման եւ մշակոյթի խնդիրները լուծւել էին եւ լուծւում են թնդանօթներով, հրացանազարկութեամբ, բանտով, տեղահանութեամբ ու կոտորածով, սովետական իշխանութիւնը հնարաւորութիւն է

տալիս իր դաշնակից ամէն մի ազգութեան, կուլտուրական թէ անկուլտուրական, այդ միեւնոյնն է, իր ուզած չափով զարգացնելու իր լեզուն, գրականութիւնը, արւեստը, որի գեղեցիկ ասպցոյցը պիտի լինի այս Ոլիմպիատը: Ցարական Ռուսաստանում հսկայական ժողովուրդների համար մի երաժշտութիւն կար, դա «շխմաների երգն» էր, երբ նրանց յեղափոխական գործերի համար աքսոր էին ուղարկում, իսկ այսօր այդ նախկին հսկայական ժողովուրդները եկել են այստեղ իրենց պետական թատրոնական խումբերով, իրենց արւեստի մշակներով, կինօներով եւ երգչա-նւագախումբերով, ոչ թէ իբրեւ մի գեկորատիվ զարդ մի ինքնակալ պետութեան, այլ իբրեւ իսկական տեւե տովետական լայնածաւալ երկրի:

Ազգային քաղաքականութեան հանդէպ գոհունակութեան շունչը լսւում էր եւ այն բոլոր ողջոյնի ճառերի մէջ, որ արտասանւում էին այս կամ այն ազգութեան ներկայացուցիչները:

«14 տարի առաջ ես առաջին անգամ Մոսկւա մտայ ծաղեալ կերպով, յայտարարեց Հրէական Պետական թատրոնի գեկավարը, սակայն ցարական օստիկանութիւնը հետադիմեց ինձ եւ գուրս շարտեց քաղաքից ի՞րեւ «իբաւազուրկ» Հրեայի: Իսկ այսօր ես մտնում եմ այս կարմիր Մայրաքաղաքը իբրեւ մի համագոր քաղաքացի, իբրեւ այս երկրի անբերից մէկը, մտնում եմ ոչ թէ մենակ, այլ հետս ունենալով 100 հազուց բաղկացած մի հրէական գերադասական խումբ:»

Տխուր անցեալի վերյուշներով սկսեց իր ողջոյնի ճառը նաեւ Հայաստանի Պետական թատրոնի գեկավար՝ Արմըր:

«Մինչեւ օրս, ասաց նա, Հայաստանից Մոսկւա էին համուժ կոտորածների ու ջարդերի աղետարշ լուրեր: Այսօր այդ ամէնը, իբրեւ մի եպերելի յուշ, պատմութեան գիրկն ենք յանձնել մենք եւ եկել ենք արդէն ցոյց տալու ձեզ մեր անդուլ աշխատանքի արդիւնքները մշակոյթի եւ արւեստի ասպարիզում»:

Վերջումը խօսեց լուսաւորութեան ժողովրդական նախկին կոմիսար Լոնայարսկին, որ կանգ առաւ սովետական իշխանութեան վարած քաղաքականութեան վրայ ազդալին մշակոյթի խնդրում:

Հայաստանից Ուխտաւորներ մասնակ-

ցելու համար եկել էին՝ 1. Պետական թատրոնը, 2. Պետական կոնսերվատորիայի երգչական խումբը, 3. Հայ աշուղների խումբը, 4. Արմեն-Լինո կազմակերպութիւնը:

Հետեւեալ անգամ՝ մենք վերջին ակնարկներով ցոյց կը տանք, թէ ո՞ր ժողովուրդը ի՞նչ էր բերել ցուցադրելու Ուխտաւորների եւ թէ ի՞նչ նւաճումներ են տեսցել տարբեր ազգութիւններ սովետական իշխանութեան այս վերջին տասնամեակին:

ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Մոսկւա

ՆԻԻԹԵՐ 4. ՊՈԼՍՈՅ ԱՇԽԱՐՀԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՐ

ԳՐԱԿԱՆ ԳՈՒԵՂԻԿ ՍԵՈՒ ՄԸ ՍԿԶԲԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

Կ. Պոլսոյ Հայերը, իրենց գաղթականութեան սկզբնական շրջանին ընդհանրապէս աստուածամասի եւ եկեղեցատէր կեանք մը վարած են: Օրուան հացը ճարելով ընտանեկան բոյն մը կազմելը իրենց համար կէտ նպատակի ընտրելով, մեծ ճիգերով և վերջին ծայր հնաշատիրութեամբ անտեսական վիճակին թարեւաւելու աշխատած են:

Ուրիշ կերպ ալ չէին կրնար ընել: Իրենք արդէն բռնի կերպով Օսմանեան մայրաքաղաքը բերուած մարդիկ, կեանքի բո-

լոր գառնութիւնները ցմրուր քամած, բոլոր յոյսերնին Աստուծոյ եւ անոր պաշտօնեաներուն վրայ դրած էին: Պատրիարքներու իշխանութիւնը շատ մեծ էր այն ժամանակները:

Ասոնք՝ թուրք կառավարութեան յատուկ առանձնաշնորհումներ ալ ստացած էին, իրենց հօտը ուղղակի պատժելու՝ կարգ մը յանցանքներու համար:

Խօսքերնիս մասնաւորապէս ժե.—ժԶ. դարաշրջաններու վրայ է:

Քանի՜ ընտանիքի պատկառելի հայրեր սա՛ կամ նա՛ պատճառով Փալաթայի հարուածները ամենայն հիւսիսամբ ճաշակած